



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒՄԻՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՍՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՌՈՂ ԽՄԲԱԿ

Ե. ԲԵԿՈՎԱՆԵՓՅԱՆ

ԻՏԱԼԱԿԱՆ ՄՈՐԵԽԸ
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ



632
F-45



1934

ՅԵՐԵՎԱՆ

17592
04.03.2013

632
F-45

78-7

ՊԱՅՔԱՐԵՆՔ ԻՏԱԼԱԿԱՆ ՄՈՐԵԽԻ ԴԵՄ

Ամեն տարի Հայաստանի չորս շրջաններում
(Ապարան, Աշտարակ, Սփյուտա և Կոտայք) ուժեղ
կերպով զարգանում ե իտալական մորեխը (պը-
րուս) և բոլոր կուլտուրական բույսերին մեծ
վնաս հասցնում: Իտալական մորեխը ԽՍՀՄ-ում
շատ ե տարածված: Այս տարի մեզ մոտ քիմիա-
կան պայքար պետք ե կազմակերպվի 10,000
հեկտարի վրա:

Հասուն միջատը փոփոխական գույն ե ստո-
նում—մուգ գորշ գույնից մինչև բաց-մոխրա-
գույն կամ կավագույն. մարմնի տարբեր մասե-
րում հաճախ նկատվում են մոխրագույն բծեր:

Վերնաթեղիները կաշու նման են, թափանցիկ
չեն. նրանց տակ գտնվում են հովհարածե ծալ-
վող, թափանցիկ 2-րդ գույգ թևերը, վորոնք
հիմքից մինչև կեսը վարդագույն են: Կրծքի տակ
առջևի գույց վոտների հիմքի մեջտեղում գրտ-
նվում ե մի փոքրիկ ուռուցք, վորն իտալական

Սբբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 3-ին,
ստորագրվել է տպելու 1934 թ. հունիսի 7-ին:
Հքատ, № 109, Գլավլիտ, № 262,
Պատմեր 397, միբաժ 2000

մորեխին շատ բնորոշ ե: Բատական մորեխի հետեւի վոտքերի սրուլնքները ներսի կամ դրսի կողմից վարդագույն կամ կարմիր են:


Եղ մորեխի մարմինի յերկարությունը հասնում է 26-ից և 28 միլիմետրի, իսկ արույինը՝ 14—23 միլիմետրի: Այս տարի Հայաստանի բույսերի պաշտպանության կայանն սկսել է այդ խասատույի ուսումնասիրությունը:

Մորեխները բազմանում են ձվիկներով. եղ մորեխը զուգավորվելուց հետո հողի մեջ ձվիկներ ե ածում: Մինչև 50-ի համար ձվիկները զետեղված են լինում ձվապարկերում: Գարնաճը կամ ամառ՝ նայած կլիմայական պայմաններին և տեղի բարձրությանը, ձվիկներից դուրս են գալիս մորեխի փոքրիկ թրթուռներ: Աշտարակում և կոտայքում մորեխը ձվիկից դուրս ե գալիս մայիսի վերջերից կամ հունիսի սկզբներից, իսկ Ապարանում և Ախտայում՝ ավելի ուշ: Ձվիկից դուրս յեկած մորեխի թրթուռը լինում է 4—5 միլիմետր մեծությամբ, վորը հետագայում աստիճանաբար զարգանալով՝ ծ անգամ մաշկը փոխում ե և վերջին մաշկափոխությունից հետո դառնում ե թևավորված հաստան մորեխ:

Թրթուռի ամբողջ զարգացման պրոցեսը տևում է 35—40 որ: Իտալական մորեխի մեջ թափառելու բնագղն ավելի թույլ ե, քան մյուս

խասակար մորեխներինը: Նա սովորաբար իր ծննդավայրից հեռու չի գնում:

Տափառանի չոր, բարձրացներ տեղերն իտա-



Իտալական մորեխ

լական մորեխի սիրած տեղերն են, վորտեղ և նա գնում է իր ձվիկները: Մորեխը սնվում է

գլխավորապես տափաստամնի բռւյսերով, հացահատիկներով, վնասում և ուժեղ կերպով բանջարնոցային բռւյսերին:

Պայքարի ձեվերը՝ Կան մորեխի դեմ պայքարելու զանազան ձևեր։ Իտալական մորեխի դեմ պայքարի ամենալավ միջոցն է թունավորված գրավչանյութը։ Այս պայքարի ձևը կայանում է նրանում, վոր գրավիչ նյութերը թունավորում և ցանում են մորեխով կուտակված տեղերում։ Մորեխները սնալում են գրավիչ նյութով և սատկում։ Գրավչանյութը թունավորելու համար ոգտագործվում է մկնդեղի թթու նատրիումը, բայց կարելի յե գործադրել նաև այլ թույներ։

Գրավչանյութը պատրաստելու համար վերցնում են բրնձի կամ այսուրի թեփ, քուսպի այսուր, փայտի թեփ կամ ձիու գոմազը։

Մի հեկտարի վրա ցանում են 16—32 կիլոգրամ գրավչանյութ, ամեն 16 կիլոգրամ թեփը թունավորում են 400 գրամ մկնդեղի թթու նատրիումով։

Թունավոր գրավչանյութը պատրաստելը։ Գրավչանյութը պատրաստում են փոսերի մեջ, առուների, գետերի կամ ջրհորների մոտ փորում են 20—25 սանտիմետր խորությամբ, 2-ից 3 մետր լայնությամբ փոսեր։

Գործածության համար առանձնացած թեփը լցնում են փոսի մեջ և վրան ջուր լցնում, փորի մեջ նախորոք լուծվում և թույնը. թեփը միաժամանակ պետք է բահով կամ ձեռքով (ձեռնոցներ հագած) խառնել այնքան, մինչև վոր թեփը հավասար չափով խառնվի թույնի հետ։

400 գրամ թույնը լուծում են մեկ դույլ ջրի մեջ (10 լիտր)։ 16 կիլոգրամ բրնձի թեփը թրջելու համար պահանջում է 12—16 լիտր ջուր։

Լավ պատրաստված գրավչանյութը պետք է լինի հավասար թթված, խոնավ և դաշտում պետք է ցանել համահավասար կերպով։ Մորեխի դեմ պայքարելու աշխատանքները պետք է կատարել բրիգադներով։ Բանվորները գրավչանյութը վերցնելով դույլերով կամ պարկերով, կանգնում են վարակված դաշտում մեկը մյուսից 7—10 մետր հեռավորության վրա և առաջ շարժվելով ցանում են թեփն այնպես, ինչպես առհասարակ շաղացան ցորենն է ցանվում։

Աշխատանքները վերջացնելուց հետո պետք է բոլոր փոսերը, վորտեղ գրավչանյութ և պատրաստվել, հողով ծածկել և հետեւ, վոր բանվորներն աշխատանքից հետո ձեռքերը լվանան։



ԲԵԿԱՆՎԱՓԵՑԱՆ

17592

ԳՐԵՐ Յ ԿՈՊ.



«Ազգային գրադարան



NL0286338

Լ. БЕКОСЕВЯН

Итальянская саранча и борьба с ней

Сельхозгиз

1964

Эривань